Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 12.11.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը,
(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)
հետևյալ կազմով.
նախագահությամբ՝ իրավ. գիտ. թեկնածու Կարեն Հակոբյանի
մասնակցությամբ անդամներ՝ դատավոր Դանիել Դանիելյանի
դատավոր Աննա Դիլբարյանի,

քննարկելով վարչական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ հավակնորդի կողմից բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հավակնորդը բողոքարկել է վարչական իրավունք բաժնի 14-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 28-րդ, 29-րդ, 33-րդ, 37-րդ, 39-րդ, 40-րդ, 49-րդ առաջադրանքները և վարչական դատավարություն բաժնի 10-րդ առաջադրանքը:

Հավակնորդի բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակում քննարկելով բողոքը՝ Հանձնաժողովը արձանագրում է հետևյալը.

1. Վարչական իրավունք բաժնի 14-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 1-ին տարբերակն է, քանի որ առաջադրանքը վերաբերում է լսումներ չանցկացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պարտադիր հիմքերին, որոնք արտացոլված են առաջադրանքի հենց 1-ին տարբերակում: Մինչդեռ՝ հավակնորդը որպես ճիշտ պատասխան է նշել 2-րդ տարբերակը, որն արտացոլում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ լսումներ չանցկացնելու դիսպոզիտիվ (հայեցողական) հիմքերը: Հետևաբար, հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել առաջադրանքի ճիշտ պատասխան:

2. Վարչական իրավունք բաժնի 24-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 4-րդ տարբերակն է, քանի որ մնացած 3 տարբերակները հստակորեն արտացոլում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումները: Հետևաբար, հավակնորդի կողմից նշված 2-րդ տարբերակը չի կարող համարվել առաջադրանքի ճիշտ պատասխան:

3. Վարչական իրավունք բաժնի 25-րդ առաջադրանքի ճիշտ պատասխան կարող է համարվել ինչպես 1-ին տարբերակը, այնպես էլ հավակնորդի կողմից նշված՝ 3-րդ տարբերակը: Այս առաջադրանքը պահանջում է մատնանշել վարչական մարմնի իրավաչափ վարքագիծը վարչական վարույթի մասնակցի կողմից դիմումը և կից փաստաթղթերն օտար լեզվով ներկայացված լինելու դեպքում:

1-ին տարբերակում նշված է հետևյալը. *«վարչական մարմինն ընդունում է դիմումն ու կից փաստաթղթերը, եթե դիմողն ազգային փոքրամասնության ներկայացուցիչ է և դիմումն ու կից փաստաթղթերը ներկայացրել է տվյալ ազգային փոքրամասնության լեզվով. վարչական մարմինը, ընդունելով օտարալեզու դիմումն ու փաստաթղթերը, պահանջում է փաստաթղթերի հայերեն թարգմանությունը»:*

3-րդ տարբերակում նշված է հետևյալը. *«վարչական մարմինն ընդունում է դիմումն ու կից փաստաթղթերը, եթե դիմողն ազգային փոքրամասնության ներկայացուցիչ է և դիմումն ու կից փաստաթղթերը ներկայացրել է տվյալ ազգային փոքրամասնության լեզվով»:*

Փաստորեն, 1-ին և 3-րդ տարբերակների տարբերությունն այն է, որ 1-ին տարբերակում նշված է *«վարչական մարմինը, ընդունելով օտարալեզու դիմումն ու փաստաթղթերը, պահանջում է փաստաթղթերի հայերեն թարգմանությունը»*, իսկ 3-րդ տարբերակում այդ արտահայտությունը բացակայում է:

Մինչդեռ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն օգտագործել է *«կարող է պահանջել»* ձևակերպումը: Այսինքն՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ ազգային փոքրամասնության ներկայացուցչի կողմից տվյալ ազգային փոքրամասնության լեզվով ներկայացված դիմումն ու կից փաստաթղթերը ընդունելուց հետո դրանց հայերեն թարգմանությունը պահանջելը վարչական մարմնի ոչ թե պարտադիր, այլ հայեցողական լիազորությունն է:

Ստացվում է, որ վարչական մարմնի՝ Վարչական իրավունք բաժնի 25-րդ առաջադրանքի 3-րդ տարբերակում նկարագրված վարքագիծը ևս կարող է համարվել իրավաչափ: Ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել որպես ճիշտ պատասխան և այս առաջադրանքի համար Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

4. Վարչական իրավունք բաժնի 26-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 2-րդ տարբերակն է, քանի որ առաջադրանքը վերաբերում է վարչական վարույթը կարճելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դիսպոզիտիվ (հայեցողական) հիմքերին, որոնցից մեկն էլ արտացոլված է առաջադրանքի հենց 2-րդ տարբերակում: Մինչդեռ՝ հավակնորդը որպես ճիշտ պատասխան է նշել 4-րդ տարբերակը, այն է՝ *«բոլոր տարբերակները ճիշտ են»*: Սակայն առաջադրանքի 1-ին և 3-րդ տարբերակները վերաբերում են վարչական վարույթը կարճելու ոչ թե դիսպոզիտիվ (հայեցողական), այլ պարտադիր հիմքերին, որոնք նախատեսված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասով: Հետևաբար, հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել առաջադրանքի ճիշտ պատասխան:

5. Վարչական իրավունք բաժնի 28-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 2-րդ տարբերակն է, քանի որ այդ տարբերակն է արտացոլում վարչարարությամբ պատճառված

վնասի հատուցման եղանակների վերաբերյալ սպառիչ պատասխանը: Իսկ հավակնորդի կողմից նշված 1-ին տարբերակը չի կարող համարվել սպառիչ պատասխան վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման եղանակների վերաբերյալ: Հետևաբար, հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել առաջադրանքի ճիշտ պատասխան:

6. Վարչական իրավունք բաժնի 29-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 3-րդ տարբերակն է, քանի որ այդ տարբերակում առկա է պնդում, որը չի համապատասխանում հանրային իրավահարաբերության բնութագրմանը. հանրային իշխանության սուբյեկտն ունի իր իշխանական լիազորություններն իրականացնելու՝ ոչ թե *«իրավունք»*, ինչպես նշված է 3-րդ տարբերակում, այլ պարտականություն: Ասվածը բխում է նաև թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից: Իսկ հավակնորդի կողմից նշված 4-րդ տարբերակը համապատասխանում է հանրային իրավահարաբերության բնութագրմանը: Հետևաբար, հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել առաջադրանքի ճիշտ պատասխան:

7. Վարչական իրավունք բաժնի 33-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 2-րդ տարբերակն է, քանի որ այդ տարբերակում արտացոլված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հայցի հիման վրա հարուցված գործով պարզման ենթակա հանգամանքների սպառիչ ցանկը: Իսկ հավակնորդի նշած 1-ին տարբերակը սխալ է, քանի որ վարչական դատարանը պետք է պարզի վարչական ակտի առոչնչության՝ ոչ թե բոլոր հիմքերի, այլ միայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված հիմքի առկայությունը: Հետևաբար, հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել առաջադրանքի ճիշտ պատասխան:

8. Վարչական իրավունք բաժնի 37-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 2-րդ տարբերակն է, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի համաձայն՝ ոչ գույքային վնասի հատուցում կարող է պահանջվել միայն ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի դեպքում: Հետևաբար, հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել առաջադրանքի ճիշտ պատասխան:

9. Վարչական իրավունք բաժնի 39-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 2-րդ տարբերակն է, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վերսկսելու արդյունքում ոչ թե ընդունվում է նոր վարչական ակտ, ինչպես նշված է այդ տարբերակում, այլ վերանայվում է արդեն իսկ ընդունված վարչական ակտը: Հետևաբար, հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել առաջադրանքի ճիշտ պատասխան:

10. Վարչական իրավունք բաժնի 40-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 4-րդ տարբերակն է, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված ֆիկցիայի գործողությունը սահմանափակված է վարչական ակտի առոչնչության՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված հիմքով, ինչն էլ հենց

արտացոլված է 4-րդ տարբերակում: Հետևաբար, հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել առաջադրանքի ճիշտ պատասխան:

11. Վարչական իրավունք բաժնի 49-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 2-րդ տարբերակն է, քանի որ առաջադրանքը վերաբերում է վարչական վարույթը կասեցնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դիսպոզիտիվ (հայեցողական) հիմքերին, որոնք էլ արտացոլված են առաջադրանքի հենց 2-րդ տարբերակում: 2-րդ տարբերակում նշված է նաև, որ թվարկված ցանկը սպառիչ չէ, ինչը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին նախադասությանը: Իսկ հավակնորդի կողմից նշված 1-ին տարբերակում թվարկված են վարչական վարույթը կասեցնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դիսպոզիտիվ (հայեցողական) հիմքերը, սակայն այն վերապահմամբ, որ թվարկված ցանկը սպառիչ է, ինչը հակասում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին նախադասությանը: Հետևաբար, հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել առաջադրանքի ճիշտ պատասխան:

12. Վարչական դատավարություն բաժնի 10-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 4-րդ տարբերակն է, քանի որ այդ տարբերակում արտացոլված գործը ընդդատյա չէ վարչական դատարանի քննությանը՝ ըստ թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշման: Իսկ հավակնորդի կողմից նշված 2-րդ տարբերակում արտացոլված գործը վերաբերում է հարկային մարմնի անգործության իրավաչափությանը, որն ընդդատյա է վարչական դատարանի քննությանը: Հետևաբար, հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել առաջադրանքի ճիշտ պատասխան:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքարկման հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 2185 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի՝ Վարչական իրավունք բաժնի 25-րդ առաջադրանքի համար հավակնորդի պատասխանը գնահատել 1 միավոր:
2. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Դ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա. ԴԻԼԲԱՐՅԱՆ